Բանջարոտ (Փանջուրէտի), Աքունդեր, Կը-ղըլ-Գեղուկ, Գիւղութանմաղ, Սարգիւլ, Կոփ, Կարաջա, Ալաքրէր, Խդրելիաս, Ազ-մեղրէ, Զամուրլի-Դերէ եւ Սողանլու լեռ-նաշղթաները։ Այս լչ-ը ձգուած են 60°—60,30° երկարութեան վրայ, օձապտոյտ գծերով, որոնցից մեծագոյն մասը պատած է խիտ անտառներով։ Լեռնաշղթաների շարքը սկսում է հիւսիսից 41,45° եւ վերջա-նում է հարաւում 40,15° լայն.։

Ճորոխի Աւազանի հարաւային սահ-մանները բռնած են արեւելքից դէպի արեւ-մուտք հետեւեալ լչրը. Սողանլու լ-ին միա-ցած են Զախը-բարա, Կարդա-գեղուկ, Գի-լիա, Ազմեղրէ, Զամար, Օյուկ-Թաշ (քան-դակաւոր ժայռ), Թոփ-Դաղ, Զամուշ սրթի, Սիվրի, Կարաչիման, Կանդիլ, Դումլու, Կուշ-կուշլար, Վարդագուր, Դելիկով, Ազ-դաղ, Կուզկունբունդար, Կարա-Եայլա, Ջի-ջի-դաղ, Դանջիկ, Կոփ, Սդրչի, Սարիսան, Զորոդմա եւ Վավուկ լչ-ները։ Այս լչ-ները օձապտոյտ ձգուած են եւ տարածուած 40°-40,15° հիւս. լայն. եւ 57,30° մինչեւ 60,15° երկար։ Լչ-ները արեւելքում անտառապատ են, դէպի արեւմուտք նօսրանում են ան-տառները, նուազում, մացառի են փոխուում եւ խոպան լերկանում են։

Ճորոխի Աւազանի արեւմտա-հիւսի-սային սահմանը մի թեք գիծ է ազեղնաձեւ, որով ամբողջ Աւազանը մի մեծ եռանկիւնի